

ԱԹՈՌ Ի ՀՈՌԱՎԵԼԱՅ

1166	Ս. Ներսէս Գ. Շնորհալի	1173
Ապ. 17		Օգոս. 13
1173	Գրիգոր Գ. Տղայ	1193
		Մայ. 16
1193	Գրիգոր Ե. Քարալէժ	1194
1194	Գրիգոր Զ. Ապիրատ	1203
1195	— Բարսեղ Բ. Անեցի (Հակաթոռ)	1206
1203	Յովհաննէս Զ. Մեծարարոյ	1221
1204	— Անանիա Սեբաստացի (Հակաթոռ)	1208
1204	— Դաւիթ Գ. Աբբաղանեցի (աթոռեց)	1207
1221	Կոստանդին Ա. Բարձրբերդցի	1267
1267	Յակոբ Ա. Կլայեցի	1286
1286	Կոստանդին Բ. Պրոնապործ	1289
Ապ. 13		
1290	Ստեփանոս Գ. Հոռովկայեցի	1293

ԱԹՈՌ Ի ՍԻՍ

1293	Գրիգոր Է. Անաւարդեցի	1307
1307	Կոստանդին Գ. Կեսարացի	1322
Մայ. 19		
1322	Կոստանդին Գ. Լամբրոնացի	1326
1327	Յակոբ Բ. Տարսնացի	1341
1341	Միսիթար Գանեցի	1355
1355	Յակոբ Բ. Տարսնացի (գերստին)	1359
1359	Մեսրոպ Արտապեցի	1372
1372	Կոստանդին Ե. Սեցի	1374
1374	Պօղոս Ա. Սեցի	1377
1377	Թէոդորոս Բ. Սեցի	1392
1393	Կարապետ Ա. Կեղեցի	1408
1408	Յակոբ Գ. Սեցի	1411
1411	Գրիգոր Ը. Խանձողատ	1416
1416	Պօղոս Բ. Գառնեցի	1429
1429	Կոստանդին Զ. Վահկացի	1439
1439	Գրիգոր Թ. Մուսարեզեան	1441

ԱԹՈՌ Ի ՎԵՂԱՐՇԱՊԱՅ

1441	Կիրակոս Վիրապեցի	1443
Յն. 4		
1443	Գրիգոր Ժ. Զաւարեզեան	1466
1446	— Կարապետ Սեցի (Հակաթոռ)	
1448	— Արիստակէս Բ. Աթոռակալ (աթոռակից)	1466
1461	— Զաքարիա Աղթմարցի (Հկթոռ)	1462
1462	— Սարգիս Բ. Աջատար (աթոռակից)	1469
1466	Արիստակէս Բ. Աթոռակալ	1469
1469	Սարգիս Բ. Աջատար	1474
1470	— Յովհաննէս Է. Աջակիր (աթոռեց)	1474
1474	Յովհաննէս Է. Աջակիր	1484
1474	— Սարգիս Գ. Միւսայլ (աթոռակից)	1484
1484	Սարգիս Գ. Միւսայլ	1515
1486	— Արիստակէս Գ. (աթոռակից)	1499
1499	— Թադէոս Ա.	1504
1504	— Ներսէս Բ.	1514
1505	— Յովհաննէս	1506
1506	— Ներսէս	1507
1507	— Զաքարիա Բ. Վաղարշապատցի	1515
1515	Զաքարիա Բ. Վաղարշապատցի	1520
1520	Սարգիս Գ. Վրաստանցի	1536
1536	Գրիգոր ԺԱ. Բիւզանդացի	1541
1541	Ստեփաննոս Ե. Սալմասեցի	1564
1542	— Միքայէլ Սեբաստացի (աթոռակից)	1564

1550	— Բարսեղ Գ. (աթոռակից)	1567
1555	— Գրիգոր ԺԲ. Վաղարշապատցի (աթոռակից)	1570
1555	— Արիստակէս Գ. (աթոռակից)	1563
1564	Միքայէլ Սեբաստացի	1570
1567	— Ստեփաննոս Զ. Ասինջեցի	1575
1570	Գրիգոր ԺԲ. Վաղարշապատցի	1587
1571	— Թադէոս Բ. Վաղարշապատցի (աթոռեց)	1579
1575	— Առաքիլ	1586
1582	— Դաւիթ Գ.	1587
1587	Դաւիթ Գ. Վաղարշապատցի	1629
1593	— Միքայէլ Գառնեցի (աթոռեց)	1624
1603	— Գրիգոր ԺԳ. Սրապին	1606
Օգո. 14		Ապր. 23
1624	— Սահակ Գ. Գառնեցի	1628
1629	Մովսէս Գ. Տաթևացի	1632
Յն. 13		Մայ. 24
1633	Փիլիպպոս Աղբակեցի	1655
Յն. 13		Մայ. 25
1655	Յակոբ Գ. Զուգայեցի	1680
Ապր. 8		Օգոս. 1
1663	— Նիզադար Այնթապցի (Հակաթոռ)	1682
1682	Նիզադար Այնթապցի	1691
		Օգոս.
1691	Նահապետ Եղեմացի	1705
Օգո. 10		Յն. 13
1706	Աղբասանդր Ա. Զուգայեցի	1714
		Նոյ. 22
1715	Աստուածատուր Լամատանցի	1725
Մայ. 7		Հոկտ. 10
1726	Կարապետ Բ. Ալեքեցի	1729
Սեպ. 27		Հոկտ. 2
1730	Արրահամ Ա. Խոշարեցի	1734
		Նոյ. 11
1734	Արրահամ Բ. Կրետացի	1737
Նոյ. 24		Ապր. 18
1738	Վաղար Զահկեցի	1751
1748	— Պետրոս Բ. Գիւթուր (աթոռեց)	1749
1751	Մինաս Ակեցի	1753
Սեպ. 15		Մայ. 12
1754	Աղբասանդր Բ. Բիւզանդացի	1755
Մայ. 6		
1755	— Սահակ Ե. Ահագին (ընտրեալ)	1759
1759	Յակոբ Ե. Համախեցի	1763
Նոյ. 2		Յուլ. 26
1763	Սիմոն Երեանցի	1780
		Յուլ. 26
1780	Վուկաս Կարեցի	1799
		Դեկ. 27
1801	— Յովսէփ Արղունեան (ընտրեալ)	1801
		Մայ. 19
1801	Դաւիթ Ե. Ինեզեթցի	1804
Ապ. 11		
1802	Դանիէլ Սուրմառեցի	1808
Մայ. 25		Հոկտ. 9
1809	Եփրեմ Զորագնացի	1831
1831	Յովհաննէս Ը. Կարբեցի	1842
Մայ. 16		Մայ. 2
1843	Ներսէս Ե. Աշտարակեցի	1857
		Փետ. 1
1858	Մատթէոս Կ. Պոլսեցի	1865
Յն. 18		Օգոս. 2
1866	Գէորգ Գ. Կ. Պոլսեցի	1882
Ապ. 16		Դեկտ. 6

1885 Մակար Թեղուացի
այս 21
1892 Մկրտիչ Վանեցի
այս 5

1891
Ապր. 16

Ամենայն Հայոց կաթուղիկոսութեան գաւազանադիրքը կամ գահակալներուն շարքը նորանոր հետազոտութեանց առջև ոչ ևս մնաց նոյն սովորական ցուցակը որ Զամկանէն և Շահխաթունեանէն սկսելով ընդհանրացել էր: Ազգային եկեղեցւոյ պատմութեան ուսումնասիրութիւնը ինձ ալ առիթ տուաւ բազում ինչ նոյն իսկ աղբիւրներէն ստուգելու և անոր արդեանց վրայ հիմնուելով նոր ցուցակ մը կազմելու, զոր կը ստանանք ընդհանրաւ և որ Կ. Պոլսոյ ընդարձակ օրացոյցին մէջ ալ պիտի երևի:

Իբրաղիմայի որ այս ցուցակը լուրջ ուսումնասիրութեան նիւթ դառնայր, որպէս զի ինքնականապէս կազմուած գաւազանադիրք մը ունենանք:

Ո՞ր որ այս ցուցակին մէջ ցարգ գործածուած են տարրեր է, հետազոտութեանց վրայ փոփոխուած է, և ի հարկին կրնան հրատարակուել ևս նոյն հետազոտութեանց մանրամասնութիւնները:

Ս. Լուսաւորէն առաջ ժամանակին համար ի բաց թողուած է չորս կամ հինգ աթոռներու խառնուրդով կցկտուր ցուցակը, որ մի աթոռ չապացուցաներ, և առնուած Արտազու տթոռը միայն նուիրագործեալ Թադևոս առաքելոյ գերեզմանով:

Ս. Լուսաւորչի դարուն համար ժամանակագրութիւնը բազմակողմանի բաղդատութեանց հետեանք է:

Իւրաքանչիւր կաթուղիկոսի համար հայրենեաց կամ մականուն յաւելուած մը ընդունուած է, որովհետեւ կարգի թուահամարը պաշտօնապէս գործածուած չէ մեր գաւառէն առաջ, և յետոյ տրուած թուեր ալ չպիտի ելն:

Աթոռներուն տեղերը զատ զատ զլուսն յաղմած են, տեղափոխութիւնները ցուցնելու համար:

Վերջին դարերու կաթուղիկոսներուն համար կանոն ընդունուած է մի կաթուղիոս միայն ընդունել մի աթոռոյ համար, և

մէկէ աւելի կաթուղիկոսի անուն վայելողները կամ աթոռակից ծանչնալ կամ հակաթոռոյի կաթուղիկոսակցութեան ձեռ ուրիշ մեկնութիւն չկրնար վերցնել:

Ընտրութեան և մահուան թուականներուն ամսաթիւներն ալ ցուցնէք, եւր պատմութիւնը ճշգրիտ միջոցներ կրնձեռել:

Որովհետեւ ոչ ամեն կաթուղիկոսի վերջը մահուամբ է եղած, այլ հրաժարեալ և հրաժարեցուցեալներ ալ կան, անոր համար Մահ կամ Վերջ վերադասութիւնը զրինք:

Նիւթին կարեւորութիւնը կամ հանրակշիւթիւնը ընդունուած լինելով՝ յուսալի է որ լուրջ ուսումնասիրողներ պիտի դանուին սոյն առաջարկով զբաղելու համար:

Գաւազանադիր Վարդապետ.

Կ. Պոլսոյ մի բարձրատեսիւն եկեղեցականի կողմից ստացած Հայոց հայրապետների ցանկը ծանոթութեամբ հանգերձ հրատարակելով այտաեղ, թոյլ ենք տալիս մեզ մի փոքրիկ դիտողութիւն անել: Նախ—Լուսաւորչեան շրջանը զուտ պատմութեան սահմանադէմից դուրս ընդունելով՝ յետագայ շրջաններէ ժամանակագրութիւնը մենք յառաջ ենք տարել մինչև Թ. դարու վերջը կամ Բագրատունեաց թագաւորութեան սկիզբը, և այն եղբակացութիւնները, որոնց յանդէլ ենք, համաձայն են ըստ մեծի մասին յիշեալ ցանկի հետ, ընդունելով հարկաւ որ հեղինակի նպատակը չի եղել պատմականօրէն բոլորովին հաստատու ճշտութեամբ ալ, այլ այնչափը միայն, որչափ կարելի է մօտաւորապէս հանել ներկայումս մեր ձեռքն եղած աղբիւրներից, Բիշ չեն սակայն նաեւ աւելի կամ պակաս աչքի ընկնող տարբերութիւններ, որոնցք բաւականանում ենք առայժմ յիշել այտաեղ Ս. Ներսէսի և նորա անմիջական նախորդների ու յաջորդների համար մեր ընդունած ժամանակագրութիւնը համաձայն Պրոֆ. Գեղցեհի:

Փառէնից յետոյ Փաւստոս Բիւզանդացին կաթուղիկոս եղած է ցոյց տալիս Հասակին՝ Աղբիւնոսի ցեղից, և այդ սոսոյզ չընդունելու ոչ մի պատճառ չկայ. մանաւանդ որ Յոբանոս Կայսեր (363—364 թ.) Կեսարիայից գրուած մի թղթի մէջ յիշուում է Հայոց Կաթակոս Կաթակոս պոս, ամենայն հաւանականութեամբ նոյն այս Հասակը: * Այտաեղից հետեւում է նաեւ, որ ս.

* Տե՛ս Հ. Գեղգիւր-Փաւստոս Բիւզանց կամ Կաթակոս եկեղեցւոյ սկզբնաւորութիւն. Վեցեթի 1896. եր. 42:

Ներսէս մեծի կաթուղիկոսութիւնը 364-ից առաջ չպէտք է գնել, դորա համար աւելի զօրեղ ապացոյց է այն հանգամանքը, որ ըստ Փաւստոսի և այլոց ո. Ներսէս ձեռնադրուել է Կեսարիոյ Եւսեբիոս եպիսկոպոսից. իսկ Եւսեբիոս եպիսկոպոսական աթոռ է բարձրացել 362 թ.-ին, Կարևոր էր նաև յիշել Զմեակին, որին ըստ Փաւստոսի Երշակ թագաւորը հակաթոռ էր կարգել ո. Ներսէսի կենդանութեամբ և Յուսիկ Բ.-ին, որ նորա մահից անմիջապէս յետոյ կարգուեցաւ և որի ձեռնադրութեամբ Կեսարիա գնալու սովորութիւնը վերացաւ: Այդպէս և յաջորդ հայրապետների շարքը պէտք է գնել՝ Զաւէն, Շահակ, Եսպարակէս, ինչպէս Փաւստոս է գրեւում, որ այս ժամանակի համար անհասկած միակ վստահելի պատմագիրն է և որ տուել է մինչև իսկ երեք կաթուղիկոսների իշխանութեան տարիները (Յուսիկ 4, Զաւէն 3, Շահակ 2). և որովհետև ո. Ներսէսի մահուան հաստատուն թիւը պէտք է համարել յերաւի 373 թ.-ը, ինչպէս և ընդունել է Հեղինակը, ուստի յաջորդ կաթուղիկոսների ժամանակադրութիւնը կլինէր Յուսիկ 373—377, Զաւէն 377—380, Շահակ 380—382: Իսկ ո. Սահակ Պարթև չի կարող 390 թ.-ից առաջ կաթուղիկոսական աթոռ բարձրացած լինել, եթէ ստոյգ է, որ նա Խոսրով թագաւորի օրով է իշխանութեան հասել, որովհետև Խոսրով թագաւորից Հայաստանը Յունաց և Պարսից մէջ բաժանելուց յետոյ, և այդ բաժանումը տեղի է ունեցել (ըստ Նէօլդէ-քէի) 390 թ.-ին:

Հատերը մեր դարն ամենահարուստն ու ամենանշանաւորն են համարում մարդկային ազգի ամբողջ պատմութեան մէջ, սակայն յերաւի դժուար կլինէր անցեալից մի ուրիշ ժամանակաշրջան ցոյց առնել, որ աւելի բազմաթիւ մանկ լինէր ու աւելի բազմաթիւ զիտութեան արուեստի, պետական, հասարակական և անհատական կեանքի մէջ մասն մեծամեծ փոփոխութիւններով, այդ բոլորը մի հայեացքով չափել անհնարին է, կարելի է միայն մի որոշ տեսակէտ ընդունել և բազմաթիւ կողմերից մէկը միայն զիտողութեան առնել, Այստեղ մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ ինչ է ըսել այդ դարը եկեղեցւոյ համար: Պրոֆ. Զոսմ իւր համարում եկեղեցական պատմութեան մէջ առում է.՝ «Յեղափոխութեան (Ֆրանսիական) փոթորիկի մէջ ծնաւ ժ. դարը: Ամբողջ աշխարհը կազմալուծուել էր՝ ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին, հոգեկան աշխարհը: Լուսաւորութիւնը եկել ու երկինքը վերացրել էր մէջտեղից՝ ոչ միայն տեսանելին, որը ընտանի զիտութեան գիւտերի շնորհիւ փոխուել, լոկ միայն աչք խորոզ երեւթ էր դարձել, այլ որ աւելի մեծ նշանակութիւն ունէր՝ անտեսանելի երկինքը իւր վրեժ և մեծ թարիշ բնաւորութեամբ, որ ձգել էր քրիստոնէական հաւատը ներկայ կեանքի աշխարհի վերայ... ժ. դարը մի հարցի հետ ծնաւ. կարո՞ղ ես արդեօք վերականգնել այն, ինչ որ աւերուած է, կարո՞ղ ես ի խորոց ցնցուած հասարակութեան վերստին ամուր հիմք տալ՝ կարո՞ղ ես վերադարձնել նորան աշխարհ փրկող և աշխարհ պահպանող հաւատը՝ քրիստոնէական հաւատը»:

Արդ, ինչ է առում անցնող դարի պատմութիւնը, կարողացել է նա վերադարձնել մարդկութեան կոյրած հաւատը: Դժուար է ասել, բայց զոնէ այնչափը հաւատալի է, որ բոլորովին ուրեւ ըստ է կատարուել, ցան ժ. դարի մարդաբանները դուշակում էին: Եւրոպայում քրիստոնէութիւն կամ եկեղեցի ասելով սովորաբար կաթոլիկ եկեղեցին են հասկանում, որովհետև ազգերի քաղաքականութեան մէջ իրական գեր կատարողը նա է. ամէնից առաջ ուրեմն այդ եկեղեցւոյ վերայ կարելի է ժամանակի ազդեցութիւնը գիտել, և այստեղ եղբայրացութիւնն ամէնից աւելի աչքի ընկնող է ու զարմանալի: Հարկաւոր առաջ ում մարքի կարող էր անցնել, թէ՛ նապոլեոնի ձեռքին խողովք դարձած պապական իշխանութիւնը, իրաւունքներից ու գոյքի զրկուած պապական եկեղեցին այն ահապէն դ

ՕՏՐ ԵԿԵՂԵՅՅՆԵՐ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Տարին անցնում է և նորա հետ մի ամբողջ դար է գլորում: Անցեալի խրատական նշանակութիւնը մեր կեանքի համար և առաւել մարդաբանական ընտելութիւնն ապագայի համար՝ ստիպում են մասժող մարդուն այսպիսի դէպքերում մի ակնարկ ձգել դէպի յետ, ժամանակի պոյմանական տահմանների մէջ մի ներքին խորհուրդ որոնել: Ինչ է ըսել իւր հետ ժ. դարը, — հաղարարութեթեր ու անթիւ գրքեր գնում են այսօր այդ հարցը, և անշուշտ ոչ մէկն առանձին և ոչ իսկ բոլորը միասին բաւարար պատասխան չեն տալիս: Բէպէտ շարժանցքած է ու հաւանականօրէն սխալ այն կարծեքը, որով

* Kirchengeschichte im Grundriss, Von R. Schöpfung Prof. der Rechtswissenschaft in Leipzig, achte Auflage 1893 S. 181.